№ 3 XXXII ՄՇԱԿ XXXII 1914

ՋԱՐՈՒՀԻ ՆԱՋԱՐԵԱՆԻ

դպրոցին պսակ դնելու փոխարէն ազգականները յանձնել էին բժշկ. Բ. Նաւասարդեանին մի գումար, որ խորհրդակցելով ուշ հետ նա պատշաճ կը գտէ, յատկացնելի այդ գումարով Զարուհի Նազարեանի յիշատակը: Խորհրդակցութիւնը բարի համարեց լուսամիտ կնոջ մահճակալի մօտ ս. ԷՋՄԻԱԾԻՆ (Աղբիւր-Տարազի հրատարակութիւն, որ մինչև օրս սլանից աջողն ու շքեղը չը կայ) պատկերից ձեռք բերել հազար օրինակ և ուղարկել Ռուսաստանում հայոց բոլոր երկսեռ դիւղական, եկեղեցական-ծխ., թեմական դպրոցներին, Գէորգեան, Լազարեան ճեմարաններին, հայոց բոլոր վանքերին, հայկական բոլոր բարեգործական, քաղաքակրթական հաստատութիւններին, ընկերութիւններին, իրանց ճիւղերով, գրադարաններին, պարբերական հրատարակութիւնների խմբագրութիւններին եւ ներկայ 1914 թ. Գէորգեան ճեմարանը, թեմական եւ օրիորդական միջնակարգ (Գայիանեան, Յովնանեան, Ղարաբաղի, Ալէքսանդրապօլի, Ախալցխայի, Գոգոյեան և այլն VI և VII դասընթացեայ) դպրոցներն աւարտող բոլոր աշակերտուհիներին եւ աշակերտներին: Պատկերները կուղարկուեն յատուկ խողովակներում պօստով, պատուիրած կապոցներով և 1000 օրինակ ուղարկելու ծախսը բոլորը վճարած: Թեմական սրբազան առաջնորդներին այսու յարգանօք խնդրւում է փութով ուղարկել իրենց թեմերում եղած բոլոր ուսումնարանների, վանքերի ցուցակը մանրամասն հասցէներով և միջնակարգ երկսեռ դպրոցներում ներկայ 1914 թ. աւարտող աշակերտուհիների և աշակերտների անունները, որպէսզի մինչև առաջիկայ մայիս ամիսը ամենքին ուղարկած լինեն այս նէբերները:

Հասցէ՝ Тифлис, Бюро Печати, Головин. пр., 41.

ՆՈՐՈԴ ՀԱՆԳՈՒՅՑԵԱԼ Տ.

ՋԱՐՈՒՀԻ ՆԱՋԱՐԵԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ

Աղբիւր-Տարազի խմբագրութիւնը ի յիշատակ իր հովանի նորոգ հանգուցեալ Զարուհի Նազարեանի որոշեց 1914 թ. յունուարից սկսած մշտապէս մինչև այդ թերթերի խափանուելը ուղարկել Աղբիւր-Տարազ իրենց բոլոր յաւելուածներով և պրեմիաներով հօթը հետևեալ հաստատութիւններին՝

1) Հայ զրողների Ընկերութեան.

3) Մեղու աշխատանքի տան գրադարանին:

3) Իճլ. կուսանաց վանքի գրադարանին:

4) Թիֆլ. Ջգրաշէնի եկ. ծխ. ուսումնարանին:

5) Օշական. ս. Մեսրոպի ուսումնարանին:

6) Շուշի. Ղազանչեցոց ծխ. ուսումնարանին:

7) Շուշի. Ղազանչեցոց եկեղեցու քահանաներին:

Լոյս տեսած №№ արդէն ուղարկուեցին:

ԱՂԲԻՒՐ

երեսունեւերկուերորդ տարի 1914 № 3 մարտ

Խմբագիր-հրատարակիչ՝ Տիգրան Նազարեան

ԶԱՐՈՒՀԻ ՆԱԶԱՐԵԱՆ
(Զարի-Հաջի)
Ծն. 1835 Բ. յունուարին Շուշում
† 14 մարտի 1914 Բ. Թիֆլիս

Մարտի 13-ին լոյս ուրբաթ, մարտի 14, գիշերւայ 12 ժ. եւ 45 ր. Թոքերի քրոնիքական բորբոքումից հոգին խաղաղ աւանդեց **ԱՂԲԻՒՐԻ, ՏԱՐԱԶԻ** *հզօր հովանի եւ այս թերթի հիմնադիր ու խմբագիր-հրատարակչի մայր*

ԶԱՐՈՒՀԻ ՆԱԶԱՐԵԱՆ

Ամբիծքը կատարուեց Աղբիւր-Տարագի խմբագրատանը շաբաթ, մարտի 15-ին եղեկոյեան 8 ժամին, իսկ յուղարկաւորութիւնն ու թաղումը նոյն տեղից հետեւեալ օրը, կիրակի, Վերայի ս. Խաչ եկեղեցին, որի գերեզմանատունը եւ ամփոփեց աճիւնը ցերեկւայ 1 ժ. 15 րոպէ։

Շուշի. ամառային այգին եւ ժողովարանը.

Ա Ր Ց Ա Խ.

(Զարուհի Նազարեանի՝ Զաուի-Բաջու յիշատակին);

Քաջարանց վեհ, լեռնոտ աշխարհ,
Դու պանծալի չքնաղ Արցախ.
Համով, հոտով խնկելի վայր,
Եւ ինքնատիպ արի անկախ։

Ուր որ նայեմ, ծառ ու ծաղիկ,
Անտառ, այգի, արտ, անդաստան.
Համակ դալար և գեղեցիկ,
Ոսկի հողեր զրախտական։

Հազար-հազար ականակիտ
Աղբերակներ վճիտ պայծառ՝
Հանդիպում են ամեն քայլիդ,
Խիստ մարսական, առողջարար։

Օդերն անոյշ, մեղմ կլիմայ.
Այս ամենքի արդիւնքն է, որ

Տեղոյն մարդիկ մարմնով հսկայ՝
Են կորովի աշխատաւոր։

Իւր կենտրոնում վեհ փառահեղ՝
Արձանացած մի տիտան ժայռ,
Ջուրջ ձորերով խոր ու ահեղ,
Վրան սէգ բերդ քաղաքամայր։

Է նա Ջուչին՝ անուն պրաւիչ,
Ջուտ ծնարան քանքարների,
Տաղանդների առատ տուիչ
Եւ պակուցիչ հանճարներին։

Ինչ գեղ ոլորտ, վեհ տեսարան,
Անծայրածիր, վէս հորիզոն,
Ծաւալւում է շատ հրաշագան՝
Նրա ծերպերից կոռ բարձրոյն։

Տատրակ, սոխակ, սև մշահաւ,
Միրհաւ, կաքաւ, տռռոն, լեղակ,
Բիւր ճռուողիկ և որսահաւ՝
Դայլայլում են լի անքանակ։

Երկու հարիւր զուտ հայ գիւղեր,
Հայ անտիկա անուններով,
Թառած, պճնած սարալանջեր,
Կամ շարւած են հովիտներով։

Սաս, Ծովատեղ, Տաք, Մշկապատ,
Քերթ, Դրախտիկ, Հադրութ, Ծամձոր,
Ձարտար, Մաւաս, Ջոշ, Կուսապատ,
Դիշի, Ննկի, Հերհեր, Ռև, Յոր։

Հաթերք, Հայկ, Նախիջևանիկ,
Աւազաձոր, Ծմակահող,
Հարսու, Հաբար, Պատարեցիք,
Աշան, Փահլուլ, Թաղավարդ, Տող։

Մ՛խ, որն յիշեմ այն հովասուն
Գոզտրիկ, չքնաղ գեղ-շէներէն,
Ջնորհքով, կեանքով լի պատարուն,
Վառ պատկերներ են նկարէն։

Դալարագեղ, սիրուն Արցախ,
Օրհնութիւնով լի պերճ աշխարհ,
Բնակիչներդ են քաջ, անվախ,
Գործով-մտքով խիստ բարերար։

Կառուցած են հոծ բազմաթիւ
Գեղոն վանքեր, մեծ տաճարներ,
Եւ բացած են մեծ հանդիսիւ
Բարգաւաճուն, լաւ դպրոցներ։

Ուխտաւորները բարեպաշտ,
Ջարան-շարան վառ ջերմեռանդ,
Աշակերտները թուով խիստ շատ,
Սիրող, պաշտող են հայ աւանդ։

Արցախեցիք ժիր, կորովի՝
Կան աշխարհի ամեն ծայրում,
Տիրում են հոծ միլիոնների,
Եւ անթերի բարիք գործում։

Տիպար մարդիկ և տիպար հայ,
Մի լաւ խմոր մեր ազգի մէջ,
Եւ հոյակապ շատ գործերով
Զարդարում են պատմութեան էջ։

Բաւ է յիշել անօրինակ՝
Պատմական փաստն այն հաճելի,
Երկաթուղին այն մեծ ազդակ՝
Բերաւ մի հայ արցախեցի։

Պանծա՛, երկիր մեր հայրենի,
Բարգաւաճիր դու անդադրում,
Եւ օրինակ վեհ պարծանքի՝
Եղիր հայոց զարաստանում։

Գարօտալի վայր հայրենի,
Ընտիր շողակ պերճ Կովկասի,
Իմ անձկայրեաց հոգին ղէպ քեզ
Պիտի ձգտէ յար սրտակէզ։

Ն. Վ. Տ. Ա.

ՏԻԿ-ՏԱԿ

(Ռուսերէնից)

Փոքրիկ Լիւդմիլան, կամ ինչպէս բոլորը նրան կանչումեն, Լիւլիան, այժմ արդէն տասը տարեկան է. նա ընդունւել է ուսումնարանի առաջին դասարանը: Ամեն օր նա տուն է գալիս ժամը երկուսին և ճաշից յետոյ սկսում է պատրաստել իր հետեւեալ օրւայ դասերը: Նա թէ աշխատասէր է և թէ ուշադիր, բայց նրան սկզբում շատ էին խանգարում իր փոքրիկ եղբայրը՝ Սաշան և Կատարինէ քոյրը, որոնք դեռ չէին սովորում և շարունակ խնդրում էին Լիւլիային, որպէսզի նա խաղայ իրանց հետ: Լիւլիան իր գրքերով հե-

ուանում էր մանկանոցից և չէր իմանում, թէ որտեղ յարմարեցնէ, որպէսզի հանգիստ նատի դասերը սովորելու։

Հայրը խղճաց Լիւլիային և նրա համար առանձին սենեակ պատրաստել տւեց, որտեղ դրեց Լիւլիայի համար փոքրիկ գրասեղան, ոչ մեծ մի պահարան, գզրոց գրքերով. իսկ պատի վրայ կախեց աշխարհագրական քարտէսն ու օրացոյցը։ Եւ որպէսզի Լիւլիան դպրոցից չուշանայ առաւօտները և միշտ իմանայ, թէ ո՞ր ժամն է, հայրը ընծայեց նրան մի փոքրիկ ժամացոյց, որը Լիւլիան դրեց պահարանի վրայ։

Երբ որ սենեակն արդէն պատրաստ էր, Լիւլիայի մօտ հիւր եկան նոր բնակարանը շնորհաւորելու Սաշան և Կատարինէն։ Նրանք մանրամասն զննեցին սենեակում եղած բոլոր իրերը. իսկ Լիւլիան բացատրում էր նրանց, թէ ինչո՞ւ համար են այդ իրերը գտնւում իր սենեակում, բայց երբ նրանք մօտեցան պահարանին, Կատարինէն յանկարծ, կարծես թէ վախենալով, կամացուկ ասաց.

—Այս ի՞նչ ձայն է, լսեցէք։

—Ես ոչինչ չեմ լսում,—ասաց Սաշան։

—Ինչպէ՞ս թէ չես լսում, եկ մօտիկ, լսիր, տիկ-տակ, տիկ-տակ, տիկ-տակ։

—Ճիշտ է, ճիշտ է,—ասաց Սաշան լաւ լսելուց յետոյ,—այդ ի՞նչ բան է, Լիւլիա։

—Այդ ձայնը ժամացոյցի մէջիցն է, ժպտալով բացատրեց Լիւլիան։

—Ինչպէս թէ ժամացոյցի մէջից,—հարցրին Սաշան և Կատարինէն միասին, որոնք մինչև այժմ տեսել էին մեծ կլոր պատի ժամացոյցը սեղանատանը և հայրիկի առանձնասենեակում, իսկ այդ ժամացոյցները այնպէս բարձր էին կախուած, որ երբէք չէին լսել, թէ ինչպէս են նրանք բանում։

—Այդ ո՞վ է, որ ժամացոյցի մէջ խփում է,—հարցրեց Կատարինէն.—ես կարծում եմ՝ մի որևէ թռչուն կը լինի։

—Սխ, ի՞նչ ես ասում,—ընդհատեց նրա խօսքը Սաշան.—թռչունները վանդակում են լինում և ոչ թէ ժամացոյցների մէջ. այնտեղ հաւանական է պէտք է լինի մի փոքրիկ մուկ, որը խփում է մուրճով, գիտէ՞ք, այնպիսի «պտիկ ու ճստիկ», որի մասին մայրիկը մի անգամ մեզ պատմեց։

—Այդ դուք չը կարողացաք գուշակել.—ասաց Էլիլիան և բացեց նրանց համար ժամացոյցի փոքրիկ դռնակը.—ահա, տեսնո՞ւմ էք, այստեղ ոչ թռչուն կայ և ոչ էլ մուկ. այլ միայն ճօճանակն է, որ շարժւում է այս ու այն կողմ ու չըխկացնում տիկ-տակ, տիկ-տակ։

—Իսկ ո՞վ է նրան շարժում.—հետաքրքրւեց Սաշան.—դու բաց արա մեզ համար ամբողջ ժամացոյցը, ապա թէ ոչ ես միշտ պէտք է մտածեմ, թէ այնտեղ անպատճառ մուկ է նստած։

—Մտածում ես, մտածիր,—ծիծաղեց Էլի-

լիան,—իսկ ժամացոյցը սրանից էլ աւել բանալ չեմ կարող. Թէ ինչից է, որ ժամացոյցները բանում են, ես ինքս էլ չը գիտեմ։

—Ոչ, այնտեղ անպատճառ պստիկ ու ճստիկ է նստած,—վրայ բերեց Սաշան և երկար դիտեց ժամացոյցը ամեն կողմից, յոյս ունենալով տեսնել թզուկի ձեռքը կամ գլուխը, իսկ Կատարինէին շարունակ թւում էր, Թէ այնտեղ հաւանական է թռչուն է նստած։

—Դէ, ներեցէք, սիրելի հիւրեր,—ասաց վերջապէս Ելիլիան,—Թէկուզ դուք այստեղ մինչև կէս գիշեր կանգնէք, միևնոյն է, ժամացոյցի մէջ ոչինչ չէք տեսնի, իսկ ինձ նա ասում է, Թէ պասերդ սովորելու ժամանակ է։

Սաշան և Կատարինէն ակամայ դուրս եկան Ելիլիայի սենեակից և յետոյ երկար ժամանակ վիճում էին, Թէ ո՞վ է նստած ժամացոյցի մէջ, Թռչո՞ւն, Թէ պստիկն ու չստիկը։

Ս. Մանուկօղլեան

Ռօզան ու Ռօզկան.

Ռօզան մի մեծ, բրդոտ, չար ու ծոյլ գամփռ էր, իսկ Ռօզկան փոքրիկ, չարաճճի արագաշարժ շնիկ էր. նրանք երկուսն էլ ապրում էին նոյն բակում, միշտ հաշտ իրար հետ. միայն երբեմն, երբ մի ոսկր էին շպրտում, Ռօզկան պոչը քաշած մոտիկ էր անում հեռուից, իսկ Ռօզան վրստահ ու հաստատ մօտենում էր ու իր խոշոր թաթերը դնում հիւթալի պատառի վրայ. սակայն երբ լիանում էր, կամ այդ բաժինը այնքան էլ իւղալի չէր, այն ժամանակ հեռանում էր մռմռալով և զիջում շնիկին։

Տան տէրը, ծեր ժլատ Ալի-Բէգը աւելորդ համարեց հացի թանգ տարին երկու շուն պահել. նա արտաքսեց տնից չարաճճի Ռօզկային. բայց երբ սա ցուրտ գիշերը փողոցում անցկացնելուց յետոյ միւս օրը նորից փաթաթուեց տիրոջ ոտները, Ալի-Բէգն այս անգամ այնպէս թակեց նրան, որ խեղճ Ռօզկան աղեխարշ ոռնոցով դուրս ընկաւ բակից ու... այլ ևս չանցաւ այդ շէմքից։

Այն օրւանից հաւատարիմ Ռօզկան ցերեկները կորչում էր գիտեմ ուր, իսկ երեկոները, երբ ներսից կապւում են դարպասի դռները, նա դալիս հանգիստ պառկում է փողոցում, այդ փակ դռների առջև. այն օրւանից Ռօզան էլ փոխւեց. չընայած տիրոջ արգելքներին, նա միշտ առիթ է փնտրում հիւրերի յետևից դուրս ընկնելու փողոց և շատ անգամ գիշերները այնտեղ է անցկացնում, խեղճ, անպաշտպան, ծեծւած ընկերոջ մօտ, խաղում է նրա

հետ, լիզում է նրան. ես մի անգամ տեսայ նոյնիսկ, որ նա ոսկրը բերանին դուրս պրծաւ դռնից իմ յետևից և ուշ գիշերին վերադառնալիս նկատեցի նրանց՝ միասին այդ ոսկրը կրծելիս։ Գոհ էր Ռօզան, որ ծեծւած ընկերոջ վիշտն էր բաժանում. երջանիկ էր Ռօզկան, որ իր սիրելի տիրոջ դէմքը հաւատարիմ հսկում էր։

Իսկ ժլատ Ալի-Բէգը քաղցը խռմփում էր տաք անկողնում. նրան ինչ փոյթ անձնանուէր Ռօզկան կամ բար Ռօզան...

Մ. Դուրգարեան.

ԼԵՐԱՆ ՎՏԱԿԸ

Ադրծակելով շանթ ու շաուաչ,
Որոտ, աղմուկ ու հաուաչ,
Վայր է վազում լերան գլխից
Ջինջ վտակը փրփրալից:

Մերթ երգում է, անուշ խլշշում,
Մեղմ ու հանդարտ վըշվըշում,
Մերթ գոռում է, փրփրում ահեղ,
Ինչպէս անսանձ մի հեղեղ:

Բայց ահա տես, սիրուն մանուկ,
Լուռ է վտակն, անաղմուկ,
Եւ այն լերան ստորոտում
Էլ չի ահեղ որոտում:

Բայց դու գիտե՞ս, թէ նա ինչի՞
Զայն էր հանում շաուաչի,
Եւ կամ ո՞ւր էր գընում, վազում,
Փըրփուրներով սար դիզում:

Լերան լանջից նա կը վազէր,
Որ դաշտն ազատ շուտ հասնէր,
Ուր ծարաւած վարդ ու շուշան
Ջուր կուզէին խլշխլշան...

Պետրոս Մռաւեանց

Հ Ր Ի Ա Ն

Կանուխ առաւօտեան ջհուդի տղան եկաւ գիւղից և ուղևորւեց դէպի Մ. գիւղը, որտեղ ապրում էր հարուստ հրէայ Ռաբբի Մովսէսը։ Նա գնում էր դրաւ դնի նրա մօտ մօր մատանին, որպէսզի փող վերցնի և դրանով պաշտպանի ընտանիքի գոյութիւնը, մինչև հիւանդ հայրը կառողջանայ և կսկսէ աշխատել։

Ջհուդի տղայ Ազիզը առաջ էր ընթանում բաց դաշտի միջով դէպի անտառը, որի միւս կողմը գտնւում էր Մ. գիւղը։ Հաւքերը վաղուց էին զարթել քնից և իրենց առաւօտեան երգն էին երգում։ Արծաթափայլ առաւօտեան ցօղը թրջում էր նրա ոտքերը. նա ոչինչ չէր նկատում ու առաջ էր ընթանում։

Յանկարծ նրա մտքի մէջ սկսեց պատկերանալ հայրը չոր մահճակալի վրայ պառկած. ահա ինքը տանը նստած է նրա անկողնի մօտ ու ննջում է։ Հայրը փոքրիկ լուսամտից նայում է դէպի հեռուն, հեռուն, դէպի անտառը, որի միւս կողմը կարծես երկինքն ու երկիրը խառնւում են իրար։ Ազիզին թւում է, որ հայրը այդ խառնուրդի մօտ, այդ սարերի միւս կողմը թողել է մի բան, մի թանգագին բան։ Ահա նրա մտքում վերածնւեցին հօր խօսքերը. «Երբ հաջողանանք, կերթանք»։ Բայց թէ ո՛ւր, նա չէր կարողանում հասկանալ։

Անընդհատ մռայլ ու անբացատրելի մտքերը շրջապատում էին փոքրիկ հրէային, բայց նա առանց յոգնելու առաջ էր գնում։ Նրան պատկերացան մայրը, տատը, հայրը, Ռաբբի Մովսէսը... Նա յիշեց, թէ ինչպէս առաջի

օրը մայրը լուռ ու մունջ նստել էր դռան մեծ քարի վրայ, ձեռքը դրել ծնօտին ու հայրիկի նման մտախոհ նայում էր հեռուն...

Նա յիշեց, թէ ինչպէս մայրը վեր կացաւ քարի վրայից ու արցունքները աչքերին ուղևորւեց դէպի տուն... Նա յիշեց, թէ ինչպէս տատը ասաց մայրիկին. «Կը մեռնի»... ու սկսեց լալ։

Ագիկի աչքերից արցունքները սկսեցին հոսել ու թրջել նրա նիհար երեսը։

Ահա և անտառը։ Նա մտաւ անտառը, նստեց ծառի տակ ու սկսեց հանգստանալ, որպէսզի կրկին ուղին շարունակի։

Փոքրիկ քամի վեր կացաւ, և ծառերը սկսեցին խըշխըշալ. այդ խշխշոցի հետ փոքրիկ հրէան ևս սկսեց դողալ։

Նա վախենում էր՝ չը լինի թէ յանկարծ պատահեն հայ երեխաները և սկսեն իրեն ծեծել, ինչպէս առաջի օրը ծեծել էին մայրիկին։

Ազիզը վեր կացաւ տեղից և քայլերն ուղղեց դէպի անտառի խորքը... Որքան առաջ էր գնում, վախն աւելի էր սաստկանում։ Մերթ ընդ մերթ կանգնում էր, նայում շուրջը ու նորից գնում։

Յանկարծ նա կանգնեց... Նրա աչքերին երևացին եղները, որոնք փոքրիկ շաւղով գալիս էին դէպի մեծ ճանապարհը, որտեղ գտնւում էր նա... Ահա և խօսակցութեան ձայները։

Նա վախվխելով մտաւ մօտակայ ծառի փչակը, շունչը իրեն հաւաքեց ու դողդողալով սկսեց սպասել, թէ երբ կանցնի չարատանջ ժամը։

Ձայները կամաց-կամաց մօտենում էին. նրա սիրտն աւելի ևս սկսեց բաբախել... Նա դիտմամբ շնչառութիւնը կտրել էր, վախենալով՝ չը լինի թէ հասկանան այնտեղ մարդ լինելը։

Ահա ձայները բոլորովին մօտեցան...հաւասարեցին... անցան։

Փոքրիկ հրէան ազատ շնչեց, դուրս եկաւ ծառի փչակից ու վախվխելով ուղին շարունակեց։

Կրկին նա կանգ առաւ, պատահելով մի հայ տղայի, որը երկար մահակն ուսին, շուշացնելով ներքև էր քայլում։

—Տղերք, հէյ, տղերք—ձայն տւեց գիւղացու տղան—ջհուդի ճուտը այստեղ է, եկէք փետրենք։

Մի ակնթարթում բոլորը հաւաքւեցին նրա շուրջը։ Այդ րոպէին նա նման էր որսորդներով շրջապատւած այծեամի, որը խղճուկ կերպով իր հայեացքը ձգում էր մէկ մէկի, ապա միւսների վրայ պարբերաբար։ Ազիզը լալիս էր, գիտենալով որ իրան կըսկսեն ծեծել և մօր մատանին ձեռքիցը կը խլեն։

Նա իր մտքում սկսեց ասել հօրից սովորած աղօթքը։

—Է՛յ, ջհուդի պոզ, ինչո՞ւ ես լաց լինում—գոռացին ամեն կողմից։

—Տղերք,—ձայն տւեց մէկը,—սրան չը փետրենք...

—Փետրենք, փետրենք.—հաւանութիւն տւին ամեն կողմից։ Բռնեցին փոքրիկ հրէային ու սկսեցին ծեծել...

—Տուր, ինչ որ ունես, ապա թէ ոչ քեզ կը սպանենք—ասաց չարաճճիներից մէկը ու երկար մահակը օդում ճօճելով իջեցրեց խեղճի մէջքին։ Ազիզը «օֆ» քաշեց, չոքեց ծնկների վրայ ու մէջքը բռնեց։

Նա երկար լալիս էր, աղաչում, որ իրեն բաց թողնեն գնայ, որ իր մօտ ոչինչ չը կայ...

—Տղերք, ամեն մէկդ մէկ-մէկ մահակ հասցրէք ու թողէք գնայ...

—Չէ, չէ, սրանք մեր Քրիստոսին խաչել են, եկէք մենք էլ սրան խաչենք։

—Հա՛, հա. Գալօն լաւ է ասում.—ձայն տւին ամեն կողմից։ Ազիզին բռնեցին և տարան մեծ ծառի մօտ։

Բարեբախտաբար այդտեղով անցնում էր մի ծեր հայ գիւղացի։ Նա տեսնելով չարաճճիներին, մօտեցաւ նրանց և վրանները գոռաց.

—Այդ ի՞նչ էք անում, անպիտաններ։

—Ջհուդ է, ապէր, ջհուդ...

—Բաց թողէք, լակոտներ. դա ի՞նչ է արել ձեզ, որ այդպէս չարչարում էք։

Չարաճճիները կարծես ամաչեցին, բաց թողին Ազիզին և իրանք վազելով ներքև գնացին։

Ազիզը խելագարի նման առաջ էր գնում .. օրը արդէն կէս էր եղել... ամպերը կուտակւում էին երկնքում։

Անձրև էր մաղում։

Աննկատելի կերպով նա հասաւ մի սարի ստորոտ։ Մինչև այդտեղ հասնելը շատ անգամ էր վայր ընկել ու վեր կացել։ Երեսը չանգրտւել էր, և արիւն էր հոսում։

Յանկարծ... անզգոյշ շարժումից նա ձորը գլորւեց ու հոգին աւանդեց... նա քնեց յաւիտեան։

Մեղմ անձրև էր շաղում ու թրջում մանկան դիակը։

Մ՛չոք չը կար, որ լաց լինէը նրա դիակի վրայ... Երկինքն էը լալիս ու իր արցունքներով լւանում էը նրա արիւնոտ դիակը...

***

Ա. գիւղում հրէայի տանը երկու օր է հիւանդ հայրը մահւան անկողնում սպասում է իր որդուն։ Նա փոքրիկ լուսամտից նայում է դէպի սարերը, որի միւս կողմը կարծես երկինքն ու երկիրը խառնւում են։

Չը կայ զաւակը, բայց նա դարձեալ սպասում է և սպասում։

—Ա՛խ, Ազիզ, բալաս, ուր ես.— գոչում էր նա— արի. ինչո՞ւ չես գալիս, ընկնում դիրկս, որ վերջին անգամ համբուրեմ քեզ, ինչո՞ւ չես վերցնում մի բաժակ սառը ջուր և լցնում իմ պապակած սրտի վրայ... Մ՛եռնում եմ, բալաս, արի, հօրդ քո ձեռքով գերեզման իջեցրու։

—Մի յուսահատիր, որդի, ահա որտեղ որ է կը գայ... ինչո՞ւ ես այդպէս բաներ ասում—ասում էր մայրը մեղմօրէն։

—Հա՜ա. կը գայ չէ, նանէ։

—Կը գայ, բաս...

—Է՞հ, չի գալ, ով է իմանում ինչ է պատահել հրեխիս... Նանէ, ջուր տո՜ր։

—Աղչի, ջուր բեր հրեխիս համար,—ասաց պառաւը, դառնալով հարսին, որը դռան մօտ կանգնած մեռնող ամուսնուն էր նայում ու արտասւում։

Հիւանդի աչքերը արդէն իսկոյն էին ընկել։ Նա նայում էր դէպի հեռուն մի կէտի։

Ներս մտաւ հարսը ջրի բաժակը ձեռքին ու տւեց սկեսուրին։

—Խմիր, բալաս—ասաց պառաւը, ջուրը մօտեցնելով որդուն։

Հրէան նոյնիսկ չը նայեց մօր վրայ։

—Ա՛խր բերինք, բալաս։

—Բերի՛ր... ուր է, ուր է, ասացէք Թող ինձ մօտ գայ,

Թող չը վախենայ ինձանից. վերջին անգամն եմ նրան համբուրելու։

—Ո՞ւմ, որդի։

—Ազիզ, Ազիզ,—թույլ ձայնով շշնջաց հիւանդը։

—Ազիզը չէ, բալաս, ջուրը բերինք, ջուրը։

—Հա՜, ջուրը... չէ, էլ չեմ խմում. ես ծարաւ չեմ, իսկ Ազիզը, նանէ, ծարաւ կը լինի...

Աղջէն բոլորովին թուլացել էր... աչքերը կուչ եկել... կարծես նայում էր դէպի հեռուն, հեռուն։

Նա վերջին անգամ հազիւ բերանը բացեց և շշնջաց։

—Ազիզը չեկաւ,—ու քնեց յաւիտեան...

Սուրէն Մարկոսեանց;

Մանկական Աշխարհ

VI տարի պատկերազարդ զուարք ամսաթերթ տարի VI

1914 թ. № 3 մարտ

Հրատարակւում է մասնակցութեամբ Աղբիւրի աշխատակիցների եւ ժրաջան մեր բաժանորդ աշակերտուհիների ու աշակերտների։

ՍԵՐ ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆ

ԳԷՊԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՅՐԵԸԸ

(Սկիզբը Աղբիւր № 1, յաւելած)

Բարձրացանք վերև երկրորդ յարկը. մտանք մի կիսամութ միջանցք, որի վրայ դուրս էին գալիս նրանց բոլորի խցերի դռները։ Առաջին իսկ հայեացքից դուր եկան ինձ այդ փոքրիկ, բայց գեղեցիկ բնակարանները, մաքուր վերին աստիճանի, հասարակ կահկարասիքով, առանց պաճուճանքի։ Ամեն մի ծեր կոյս բնակւում էր մի ջահել կոյսի (դպրուհի) հետ մի սենեակում։ Կոյսերի թիւը 14 էր. սրանք ապրում են իրենց աշխատանքով. ունեն հաց հայթայթելու միջոցներ. մենք մեկի խըցում տեսանք նաև գուլպայ գործելու մեքենայ, որով նա փող էր աշխատում։

Այստեղ մայրապետին չը տեսանք, նա հիւանդ էր։ Մեզ առաջնորդում էր մի միջին հասակով կոյս, որի հետ մտանք և սեղանատունը, որտեղ ամենքը միասին թէյ էին խմում, ճաշում

ու ընթրում էին։ Առաւօտւայ թէյը պատրաստ էր. խնդրեցինք մեզ ճաշել թէյի, բայց մենք հրաժարուեցինք, շնորհակալութիւն յայտնելով վերադարձանք դպրոց։

Թէյից յետոյ ճանապարհուեցինք «Ձինուորական թանգարան», բայց դժբախտաբար փակ էր, ուստի նատելով տրամվայ, գնա-



Թիֆլիս. Ռուսաստան Մարիամեան օրիորդաց դպրոցը.

ցինք Մուշտայիդ այգին։ Մտնելով այգին, երկար դեռ գնում էինք ծառուղիներով, յետոյ իջանք ներքև գետի ափը։ Գետը հոսում էր շատ հանդարտ ու լուռ, նրա միւս ափին լողում էին փոքրիկ եր-եխաներ։ Մենք սկսեցինք ափին թափուած քարերից շպրտել դէպի գետը։ Այստեղ առաջացաւ մրցում ուժերի մէջ, որին մաս-նակցում էին նաև ուսուցիչները. ամենից հեռու ընկնում էին ա-շակերտների քարերը։ Այստեղից անցանք վերև, ներս մտանք մի

նոր դարպասով, որից ներս ընկած էր թթենիների այգի։ Ծառուղիների միջով անցնելով հասանք մի բնակարան, որտեղ մի քանի կանայք նստած բուժուհներ էին շարում թելին։ Շուտով դուրս եկաւ դրանց կառավարիչը, հրաւիրելով մեզ ներս, սկսեց խօսել ու բացատրել շերամապահութեան մասին, մասամբ մեզ ծանօթ և մասամբ նոր մեզ համար. մենք լարուած ուշադրութեամբ լսում էինք նրա դասախօսութիւնը։ Իր պատմութիւնը վերջացնելուց յետոյ տարաւ մեզ գործարան, որը դժբախտաբար կանգնած էր, միայն մի քանի կանայք թել էին մանում։ Այստեղ գտնւում էին մետաքսագործութեան ամենայն գործիքներն ու մեքենան։ Շատ շուտ հեռացանք այդտեղից։

Գործարանից դիմեցինք ուղղակի դէպ ղատնտեսական ցուցահանդէսը, որտեղ ի ցոյց էր դրուած այն բոլորը, ինչ որ վերաբերում է շերամապահութեան և մետաքսագործութեան՝ բուժուհների սկզբնական կեանքից մինչև վերջը, զանազան գոյնի բուժուհներ, որդեր, թիթեռներ. մետաքսագործութեան զանազան գործիքներ, մեքենաներ փոքր դիրքով շինուած, թթի տեսակներ, զանազան տեսակ մետաքսներ ու կտորներ և այլն, և այլն։ Այստեղից գնացինք Վանքի եկեղեցին։ Վանքը շատ գեղեցիկ տեսք ունէր ինչպէս դրսից, նոյնպէս և ներսից։ Եկեղեցու գաւթում մենք տեսանք Սուրբ Աստուածածնի դամբարանը սև մարմարիոն քարից շինուած. երկար կանգնած մտաբերում էինք նրա «Պեպօ» ու «Քանդուած օճախ» կատակերգութիւնները, որոնք մի քանի անգամ կարդացել ու գրականութեան նիւթ էինք դարձրել մեր դասարանում։ Անցանք մօտիկ գերեզմանները, որոնք շրջապատուած էին երկաթեայ ցանկապատներով։ Այստեղ թաղուած են յայտնի հայ զօրապետները՝ Լօռիս-Մելիքեան, Շելկովնիկով, Տէր-Ղուկասեան և ուրիշները։

Այդ օրը մենք ճաշեցինք աւելի մաքուր և դուրեկան ճաշարանում։

Երեկոյեան ժամը վեցին ճանապարհուեցինք դէպի Փունիկուլեօրը։ Ընկեր-ընկերուհիներից շատերը գնացել էին աղգականների տները. դրա համար էլ ուշացանք։ Արդէն ամենքս հաւաքուած բարձրանում էինք Փունիկուլեօրով Մամա-Դաւիթի սարը։ Տրամվայը լիքն էր աշակերտ-աշակերտուհիներով. որքան բարձրանում՝ մեր աչքի հորիզոնը աւելի ու աւելի լայնանում էր։ Ճանապարհի ուղիղ կիսում հանդիպեցինք մի ուրիշ տրամվայի, որը վերևից էր իջնում. րոպէապէս կանգնելուց յետոյ շարունակեցին իրենց ճանապարհները։ Այդ հանդիպման կէտից քիչ հեռու գտնւում էր Մամա-Դաւիթի եկեղեցին, որտեղ թաղուած է ռուս գրող Գրիբոեդովը։ Բարձրանում էինք անվերջ։ «Դէպի վեր, սարն

Թիֆլիսի Կուսանաց ս. Ստեփաննոս եկեղեցին

ի վեր» լսւում էր ամեն կողմից։ Արդէն հասանք և իջանք մի փոքրիկ կայարանում։ Բարձրացանք պատշգամբ, որտեղից երեւում էր ամբողջ քաղաքը։ Այստեղ ես երևակայում էի մեզ օդի մէջ, աներևակայելի բարձրութեան վրայ, որտեղից քաղաքը երևում էր ինչպէս մի կաթսայի մէջ, չորս կողմից ժասամբ շրջապատուած լեռներով ու այգիներով։ Այստեղից որոշեցինք քաղաքի զանազան մասերը։

Դիմացից երևում էր Ներսիսեան դպրոցի հոյակապ շէնքը իր հսկայական պատուհաններով։ Քաղաքի մի ծայրում երևում էր բուսաբանական այգին, միւս ծայրում Մուշտայիդը։ Կուր գետը հեռու դաշտերի միջով, ոլոր-մոլոր հոսում անցնում է քաղաքի միջով դէպի քաղաքի հակառակ կողմը։

Կայարանից դուրս եկանք դաշտը, որտեղ գտնւում էին մառաններ ու բեստորաններ. սրանցից մէկում պատւիրեցինք թէյ, իսկ մենք անցանք հեռու դաշտերում զբօսնելու, չորս կողմից քնութեան գեղեցկութիւնները կաշկանդել, գրաւել էին մեր ուշադրութիւնը։ Վերադառնալով զբօսաւեղից, գտանք մեր աշակերտներին մի արջի քոթոթի մօտ խմբւած։

Արջը կապած էր պինդ շղթայով մի կոճղից։ Երկար զբաղւեցինք արջով, տալիս էինք զանազան քաղցրաւենիքներ, շաքար, կանֆետ. որից շատ փառաւոր կերպով հեռացնում էր թուղթն ու մաքրազարդում։ Տւեցինք նաև լիմոնադ. բռնեց երկու թաթով շիշը ու տանելով դէպի դունչը, դատարկեց միջի լիմոնադը, նոյնպէս վերաբերւեց և միւս շշերի հետ։ Ամենքս ուրախութիւնից ծափահարում էինք, իսկ ինքը, շատ խաղաղ կերպով պարում էր մեր ծափահարութեան տակտի տակ։ Փիչ յետոյ մառանատիրոջ տղան՝ մօտ 8 տարեկան, մօտենալով արջին, սկսեց նրա հետ կռիւ բռնել, մի քանի անգամ արջը տապալեց գետին երեխային, երեխան զայրացած դրանից, սկսեց հաւաքել բոլոր ուժերը ու բռնելով արջի կոկորդից, տապալեց գետին։ Երկուսն էլ զայրացած միմեանց վրայ, աշխատում էին մէկը մեւսին տապալել։ Այնքան գրաւեել էինք այդ երկուսով, որ չը նկատեցինք, թէ ինչպէս երկնքում աստղերը հատ-հատ բացել էին աչքերը, ինչպէս և քաղաքում արդէն սկսել էին տեղ-տեղ լոյսեր պլպլալ։ Երեկոյեան ժառախուղը պատել էր ամբողջ շրջակայքը, մշուշի մէջ նշմարւում էին հեռւում քաղաքը շրջապատող բլուրների ալիքաձև կատարները։

Թէյից յետոյ վերադարձանք կայարան ճանապարհւելու պատճառով, բայց մեզ ուշացրեց այնտեղ բացօդեայ կատարւող սինեմատոգրաֆը, որտեղ ցոյց էին տալիս մի շատ հետաքրքիր դէպք։ Տրամվայը պատրաստ էր, ամենքս տեղաւորւելով, ճանա-

պարհեցինք. մեր առաջ ընկած էր լուսաւորուած քաղաքը, որը աստղալից երկնքի արտացոլումն էր ներկայացնում իրենից։

Կրակի ձորէր ընկած մեր առաջ, որին պատում անցնում էր իր սև ու մութ շերտով կոկիկ Քուրը, եզերած երկու կողմից կարմրագլուխ տներով։

Թիֆլիսի Կուսանոցի մայրապետ գերաշնորհնական կոյս Հռիփսիմէ Թայիրեանց

Իջանք շատ հանգիստ, չը նայած որ այդ սարը սարսափ էր ձգում մեր սիրտը։ Դպրոց հասնելու պէս սկսեցինք մեր սովորական ուրախութիւնը, շատ երկար դեռ այդ օրւայ տեսածների

Թիֆլիսի Կաուկազեան Ամառնային Վարժարանի խումբը Ազգ. Ընդհանուր Ժողովի ատեն Մայրաքաղաքում

տպաւորութեան տակ ուրախութիւն էինք անում, գիշերւայ մեղմիկ զեփիւռի մասնակցութեամբ։

16-ին յունիսի

Արդէն վերջին օրն էր Թիֆլիսումն էինք, այդ երեկոյ պէտք է թողնէինք այդ շքեղ և ուրախ քաղաքը։ Չը գիտեմ՝ էքսկուրսիայի աղդեցութիւնից թէ ինչ պատճառով ամենքս ջղայնացել էինք, բաւական էր մի փոքրիկ կոպիտ խօսք, իսկոյն գրգռւում էինք։

Այդ օրը մենք գնացինք Հինաւորական թանգարան, որտեղ պահւում են շատ գեղեցիկ հնութիւններ, թագաւորների, զօրապետների, նահանգապետների նկարներ, արձաններ, փոքրիկ դիրքով շինած բերդեր, գիւղեր, դիրքեր և այլն։

Նկարներից գեղեցիկ էին Թիֆլիսի, Ալէքսանդրապօլի և Երևանի առումը. դրւած էին հին զէնքեր, զրահներ, զինաւորական զգեստներ և այլն։ Այստեղ մնալ կարող էինք միայն մի ժամ։

Թանգարանից դիմեցինք Ներսիսեան դպրոցը, որը հեռու էր գտնւում մեր իջևանից մի քանի վերստ, ուստի անցանք այդ ճանապարհը, հասանք մի բլրի, որի ծայրին մենակ կանգնած էր այդ հսկայական շէնքը։ Ամենքս առանձին յարգանքով էինք նայում այդ շինութեան վրայ, որտեղ բուն էր դրել հայկական հոգին. մենք միշտ տեսել էինք հայոց դպրոցները աւելի խեղճ դրութեան, մէջ քան այստեղ էինք տեսնում։

Դպրոցում մենք հիացանք այնտեղի մաքրութիւնից ու գեղեցկութիւնից։ Դպրոցը գեղեցիկ էր իր հսկայական սիրնանցքներով, դասարաններով ու դահլիճներով, որ այցելեցինք հէնց դպրոց հասնելուն պէս։ Երջանիկ էինք զգում մեզ, տեսնելով այն բոլոր յարմարութիւնները, որոնք պատկանում էին հայոց դպրոցին։

Դպրոցից գնացինք Խոջիվանք, կեղտոտ ու անյարմար փողոցներով։ Արևի ճառագայթները արդէն զգալի կերպով այրում էին։ Մտնելով դարպասից ներս, սկսեցինք կարդալ գերեզմանաքարերի և արձանների արձանագրութիւնները։

Ուշադրութեան արժանի մի երևոյթ, մինչդեռ մենք զբաղւած էինք ընթերցանութեամբ, լսեց քահանայի ձայնը. բերում էին մի մեռել մեծ յուղարկաւորութեամբ։ Մենք աշակերտուհիներս հետաքրքրութեամբ գնացինք յուղարկաւորութեան յետևից, որովհետև առաջի անգամն էինք տեսնում թաղումը։ Քահանայի «փառաց-ի փառս»-ից յետոյ դագաղը իջեցրին նոր քանդած փոսի մէջ և կոպտութեամբ հողով ծածկեցին։

Զանցաւ 2 րոպէ մեր հեռանալուց յետոյ, երբ լսեց ասիական երաժշտութեան (դուդուկ). ձայնը։ Մեր զարմանքին չափ չըկար, առաջին անգամն էինք տեսնում ժեռելի վրայ ուրախ երաժըշտութիւն, մինչդեռ յետոյ իմացանք, որ դա եղել է հանգուցեալի կտակի համաձայն։

Մտանք Ռօջիվանք, որտեղ արդէն սկսւել էր ծիսակատարութիւնը։ Վանքը շատ փոքր և անշուք։ Երկար չը մնացինք այս տեղ, որովհետև պէտք է գնայինք աւելի հետաքրքիր, մեր սրտին մօտիկ տեղ՝ Բաֆֆու գերեզմանը այցելելու. որը գտնւում էր Ռօջիվանքի ամենահիւսիսային ծայրում։ Գերեզմանաքարը ցցւած էր բարձր, բարդաձև, ծայրին առնելով մի փոքրիկ քնար։ Ամբողջապէս ծածկւած էր ոտանաւորներով, որոնք դուրս էին թռել զանազան պատանիների մատաղ սրտերից։ Մեր աշակերտներից մի քանիսը գրեցին իրենց կողմից ոտանաւորներ, իսկ մենք զարդարեցինք գերեզմանաքարը գոյնզգոյն ծաղիկներով։

Այդ օրը բաւական զբօսնելուց յետոյ, յոգնած թուլացած էինք. մի քանիսս էլ մի քիչ հիւանդի էինք նմանում, որը պ. Գրիգորեանի մէջ յղացրեց բժիշկ հրաւիրելու մտադրութիւնը։ Բարեբախտաբար բժիշկը ոչ մի լուրջ հիւանդութիւն չը գտաւ, մեր մէջ և յայտնեց, որ աւելորդ է յետ ուղարկելը։

Շտապով մենք ևս միւսների պէս պնդացրինք մեր իրեղէնները և վազեցինք բակը, ուր արդէն սկսւել էր, հրաժեշտի երեկոյթը։ Մեր ուրախութիւնը կրկնապատկւել էր։

Նւագում—պարում, երգում էինք։ Ամբակեան երգեցողութիւնը առաջին տեղն էր բռնում, թէկուզ բացակայում էր մեր երգեցողութեան ուսուցիչ և խմբի ղեկավար պ. Մայիլեանը, բայց նոյնպէս երգերը գնում էին աշխոյժ և ներդաշնակ։

Ժամը 10-ն էր։ Արդէն հնչեց հրաժեշտի ժարշը և ամենքս տեղաւորելով կապոցները սայլերի վրայ, ճանապարհւեցինք կայարան, թէկուզ գնացքը ժամ 12-ին էր ճանապարհւում։ Ժամանակը շատ ուշ էր անցնում։ Վերջապէս հասաւ և 12-ը. տեղաւորւելով իսկոյն քնեցինք մինչև ճանապարհւելը։

II

17-ին յունիսի, Լօռի

Արդէն լուսացաւ, յունիսեան մեղմ քամին փչում էր գնացքի պատուհաններից ներս։ Ժամը 6-ն էր, երբ գնացքը մտաւ Լօռւայ ձորը, այն Լօռւայ ձորը, որին մենք դասարանում փափագել և կարօտել էինք։

Հեռու, սարերի յետևից, ցցւած էր ամպամած, սուր գագաթով, կապտագոյն Լալւարը։ Մեր երկու կողմն ընկած էին բարձրը լեռներ ու քարափներ, պատած ամբողջապէս սաղարթախիտ անտառներով ու այգիներով։ Ձորի միջով հոսում էր որոտացող Դեբեդը ճիչ ու աղմուկով, յորձանք տալով։ Կոհակները իրար վրայ կուտակւելով, խփում էին իրար ուժեղ թափով, տեղ-տեղ կազմելով առւակներ, գետակներ ու ջրվէժներ։ Արշալոյսի ճառա-

գայթների հետ խաղալով անցնում էին, գնում, յետևից թողնելով սուր արձագանգը, որը աւելի զարդարում ու գեղեցկացնում էր Լօռւայ բնութիւնը։ Բլուրների լանջերին ու ձորակներում երևում էին մէկ-մէկ գիւղացիներ, երկրագործական գործիքներով, կանայք այս ու այն մարգապատիններում արդէն քաղհան էին անում։

Մի բլուրի վրայ երևում էր փոքրիկ հայկական գիւղ, կորած ամբողջապէս կանաչի մէջ։ Մի այլ բլուր կրում էր իր մէջքին փոքրիկ վանքը, պարզ ու գեղեցիկ շէնքով։

Այս բոլորի հետ միասին լեռների յետևից կամաց-կամաց բարձրանում էր արևի գունդը և տարածում մէկիկ-մէկիկ իր ծիրանագոյն ճառագայթները Լօռւայ ձորի վրայ։

Ամենքիս կախարդել էր այս բնութիւնը, պատուհանների վրայ խմբւած հրճւում էինք բնութեան հրաշագործութիւններով։ Մեզ մօտ կանգնած էր մեր ուսուցիչ պ. Հովուեանը, ոգևորւած իր հայրենիքով անընդհատ խօսում ու ցոյց էր տալիս այս կամ այն քարափը, տունը, այգին և այլն. ի միջի այլոց տեսանք և «Անուշ» պօէմայի Դսեղ գիւղը և այն քարափը, որտեղից, ենթադրում են, որ Անուշը գետն է գցել իրեն։

Կայարաններում պատահում էինք գիւղացիների, գիւղական հագուստով ու մի-մի կապոց մէջքներով գցած։ Սրանք մի տեսակ ներդաշնակութիւն էին կազմում Լօռւայ բնութեան հետ միասին։ Մենք շատ էինք կարդացել սրանց բնաւորութեան, սովորութիւնների և այլ գծերի մասին, բայց իրենց չէինք տեսել։ Պ. Հովուեանը մի փոքրիկ տղի հարցրեց, թէ նա ում տղան է, գիւղացին առանց երկար մտածելու պատասխանեց. «Իմ հօրը տղան»։

Հրճւում էինք մենք նայելով դրանց վրայ, որոնք բնակւում էին այս բնութեան հրաշալիքների ծոցում։

Մտադրւել էինք մի քանի օր մնալ Հաղբատ Սանահնում, բայց չը յաջողւեց. մեր ղեկավարները փոխեցին մտադրութիւնները և որոշեցին վերադարձին մնալ։ Աւաղ, դա էլ չը յաջողւեց։

Գնացքը անցնում էր ներքնուղիների միջով, որի ժամանակ գնացքի ներսը ստացւում էր քաօսային դրութիւն։ Ուսուցիչները հեռւում ցոյց էին տալիս երկաթի արտերը, բացատրում էին երկաթ հնձելու ձևը, մեզ շղկեցնելու և ժամանակը շուտ անկացնելու համար։

17-ին յունիսի, Ալէքսանդրապօլ.

Ժամը 12-ն էր, երբ հասանք Ալէքսանդրապօլի կայարանը։ Կայարանից ոտքով գնացինք տեղի օրիորդաց «Արդուէեան» դպրոցը։

Եղանակը շատ վատ էր, փոշի ու քամի։ Քաղաքին տխուր տեսք էին տալիս միյարկանի տների սև քարերը։ Երկյարկանի տան համարեա թէ չը պատահեցինք։ Փողոցները անհարթ էին, առանց մայթերի ու կեղտոտ։ Հասանք դպրոց, ներս մտնելուն պէս զարմանքը պատեց ամենքիս, թէ ինչպիսի խեղճ դրութեան մէջ էր գտնուում դպրոցը. այդ արդէն երևում էր դպրոցի շէնքից, մաքրութիւնից ու կարգապահութիւնից։ Դպրոցը միյարկանի էր, կազմուած մի քանի դասարաններից և միջանցքից, որոնք այնքան հին էին, որ կարծէք երբէք նորոգուած չեն, ամեն կողմ նկատելի էր կեղտոտութիւն։ Դասարաններից մէկը մաքրել տուեց տեսուչ պ. Տէր Պօղոսեանը ու տիղաւորեցինք այդտեղ։ Երկու օրւայ ընթացքում մենք դպրոցական ոչ մի կառավարիչ չը տեսանք, բացի տեսչից և մի ուրիշ ուսուցչից։

Առաջին օրը մենք այցելեցինք մի քանի լուսաւորչական և կաթոլիկ եկեղեցիներ, որոնք սովորականից դուրս հոյակապ և շքեղ էին։ Առանձին խնամք էր տարուած եկեղեցու ներսը զարդարելու համար։ Մայր եկեղեցու խորաններից մէկում տեսանք մի քանի հնութիւններ, ինչպէս օրինակ մի քանի հարիւր տարեայ Աւետարաններ, ձեռագրուած մագաղաթի վրայ։ Եկեղեցիների այսպիսի շքեղութիւնն ու շռայլութիւնը նկատելի էր նաև կաթոլիկ եկեղեցում, որը ցոյց էր տալիս գիւմբեցիների կրօնամոլութիւնը։ Թէ որքան կրօնամոլներ են ալէքսանդրապօլցիները, այդ արդէն երևում էր նրանց կեանքից։ Այստեղ համեմատութեան մէջ էին մտնում դպրոցն ու եկեղեցին, որոնց մէջ ընկած էր մի անանցանելի անդունդ։

Իրիկնադէմին գնացինք քաղաքի զբօսատեղիին, որտեղից բաւ ձրացանք մի բլուր, մասամբ գերեզմանատուն, դուրս եկանք քաղաքի պարիսպներից։ Նստելով գերեզմանաքարերի վրայ, սկսեցինք երգել խմբական ու ժողովրդական երգեր։ Ամբողջ քաղաքը մեր առաջ էր գտնուում։

Էլ ուրիշ մի հետաքրքիր տեղ չը կար գնալու. ճաշ էր Զերքէսի ձորը, որտեղ պէտք է գնայինք հետևեալ օրը, ուստի ուղիղ վերադարձանք տուն ու սկսեցինք մեր երջանիկ պարահանդէսը, որին մասնակցում էին և մի քանի բազմեցիներ։

18-ին յունիսի.

Հետևեալ առաւօտ ժամը 5-ն էր, երբ զարթեցնելով մեզ, ուսուցիչները պատուիրեցին պատրաստուել, որ գնայինք Զերքէսի ձորը։ Ժամը 6-ին ամենքս պատրաստ գնում էինք։ Առաւօտը շատ զով էր, կամաց-կամաց տարածում էր իր ճառագայթները։ Երկար անցնում էինք զինուորական վրանների մօտով, հասանք ձորը, որի միջով քչքչալով հոսում էր փոքրիկ գետը։ Ան-

ցանք կամուրջով և մտանք մի փոքրիկ հրապարակ՝ շրջապատուած սաղարթախիտ ծառերով։ Այստեղ արդէն հասել էին պ. Հովուեանը և աշակերտները ու թէյ էին պատուիրել, շուտով հասան և կառքերը, բերելով իրանց հետ մեր պաշարը։ Սկսեցինք այս հրաշալի բնութեան մէջ թէյ խմել, որից յետոյ պատուիրեցինք գրամոֆոնի վրայ նւագել. մինչդեռ այստեղ նւագում էին մի քանի հոգի աշակերտ-աշակերտուհի, պ. Գրիգորեանի հետ ճանապարհուեցինք դէպի Ախուրեան գետը, որ գտնուում էր մի քանի վերստ հեռաւորութեան վրայ մեզանից։ Ճանապարհին մի զինուոր մօտենալով մեր աշակերտներից մէկին, առաջարկեց կոխ բռնել նրա հետ։ Աշակերտը առանց սպասելու նրա պատրաստուելուն, բռնեց զինուորի գօտկատեղից ու տապալեց գետին, զինուորը զայրացած սրա վրայ, թողեց ու հեռացաւ առանց խօսելու։ Ամենքս ուրախ, ծաղիկներ քաղելով խայտաբղետ մարգագետիններից, հասանք գետի ափը։ Ախուրեանը հոսում էր շատ հանգիստ, բայց պղտոր էր։ Մօտիկ ծառերի տակ նստեցինք հանգստանալու, մինչև միւս մասը կը գայ։ Ներանք էլ եկան, և բոլորս միասին ճանապարհեցինք տուն ուրիշ ճանապարհով դէպի քաղաք։ Ճանապարհը շատ երկար ու դժւար էր մեզ համար. արևը այրում էր ճառագայթներով. ոչ մի կանաչի կամ ջրի չէր պատահեցինք. ամենքս յուսահատած թուլացած էինք. միայն խօսակցութիւնն ու վիճաբանութիւնն էր զբաղեցնում մեզ։ Քաղաքից մօտիկ մի աղբիւրի մօտ հանգստացանք. բաւականութիւն տալով մեր ծարաւին։ Հասանք տուն բոլորովին յոգնած։

Ժամը 6-ին սկսւեց պար՝ երգը. նւագը, որից յետոյ խմեցինք թէյ ու հրաժեշտի մարշը նւագելով, ճանապարհուեցինք կայարան ժամը 10-ին, թէպէտ գնացքը 12-ին էր ճանապարհւում։

Բազալ Հրիփ. Օր. Ուսումն. աշակերտուհիներ



ԶԻԱՐՃԱԼԻՓ

ՏԱԻԱՐԱԾԻ ՆԱԽԱՃԱՇԸ

I

Մի խեղճ տաւարած
Բաւական յոգնած,
Աղբիւրի մօտ նստած
Ուտում էր խորոված։

II

Խորովածից մի կտոր
Ցանկարծ ընկաւ ջրի մէջ,
Ու տաւարածը գլխակոր
Ձեռքը կոխեց ջրի մէջ։

III

Մի գորտ ընկաւ նրա ձեռքով,
Գորտը բղղաց բոլոր ձայնով։
Բայց մեր յիմարը բարկացած
Խեղճ կենդանու վրայ գոռաց։

IV

«Թէկուզ բղղաս,
Թէկուզ ճղղաս,
Փող եմ տւել,
Պէտք է ուտեմ»։

Ս. Խաչանեան

Տաղեանի վանքի Բուդաղեան ուսուցմ. աշակերտ։



ԽՆԴԻՐՆԵՐ

Ամեն մի թուից չորս-չորս հատ, բացի զրօյից, այնպէս դետեղեցէք ստորև դրւած աղիւսակի մէջ, որ ամեն կողմից գումարը 30 թիւն ստացւի, նոյնիսկ եթէ թեք ընթացքով հաշւէք։ Միևնոյն թիւը չի կարելի չորսից աւելի կամ պակաս անգամ գործածել։



1.1 2.2 3.3 4.4 5.5 6.6 7.7 8.8

Այս 1—8 թւանշանները, իւրաքանչիւրից երկու-երկու հատ, ընդամենը 16 թւանշան, այնպէս դետեղեցէք ներքևի քառակուսու մէջ, որ ամեն կողմից 18 թիւ գումարն ստանաք, աջից ձախ, վերևից ներքև և թէ թեք։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՂԲԻՒՐ № 3.

Մահզոյժ Զարուհի Նազարեան. . . . Պատկեր
Արցախ. . . . . Ե. Վ. Տ. Ա.
Տիկ-Տակ. . . . . Ս. Մանուկօղլեան
Ռոզան և Ռոզկան . . . . Մ. Դուրզարեան
Լերան վտակը (ոտանաւոր) . . . Պ. Մոճոռեանց
Հրէան (պատկերով). . . . . Սուրէն Մարկոսեանց

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Մեր էքսկուրսիան դէպի հայկական վայրերը (Սկիզբը Աղբիւր № 1 յաւելուած) հետևեալ պատկերներով՝ 1) Թիֆլիս. Յովնանեան Մարիամեան օրիորդաց դպրոց, 2) Թիֆլիսի Կուսանաց ս. Ստեփաննոս եղեղեցին, 3) Թիֆլիսի Կուսանոցի մայրապետ գերաշնորհուշնակ կոյս Հռիփսիմէ Թայիբեանց, 4) Թիֆլիսի Կուսանաց Անապատի Միաբանութիւնը մէջ տեղը Մայրապետը . Բազմայ Հռիփ. Օր. Ուսումն. աշակերտուհիներ

Զարճալիք։
Խնդիրներ։
Յայտարարութիւններ։

Խմբագրութեան գրասեղեակից

Մայիսի մէկից Աղբիւրի բաժանորդագինը դպրոցական աշակերտների համար մէկ րուբլիով փակւում է, որովհետև մնում են միայն այնքան №№, որքան Տարազ։ Եւ այդ №№-ը պահւում են Աղբիւր-Տարազ միևնոյն հասցէով ստանալ ցանկացողների համար։

Մայիսից յետոյ դպրոցական աշակերտները եթէ կամենան բաժանորդ գրւել, կարող են, միայն նոր բաժանորդագրւողները չեն ստանալ յունւարի, փետրւարի, մարտի և ապրիլի №№-ը։

ՇԸՐՈՒՆԵԿՈՒՄ Է 1914 ԹՒԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

32-րդ ՏԱՐԻ ԱՂԲԻՒՐ 1914 ՏԱՐԱԶ 25-րդ ՏԱՐԻ

— ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԻ —

Հայկական միակ իլլիւստրասիօն **Տարազը** ՅՈՒԲԵԼԵԱՆԱԿԱՆ 25-րդ տարին. Եւ այդ առիթով նա այս 1914 թ. դպրոցական աշակերտներին **ԱՂԲԻՒՐ** ամսագիրը նորից զիջանում է տարին ճանապարհածախսով հանդերձ **ՄԷԿ** րուբլիով։

Աղբիւրի դպրոցական աշակերտների համար **Տարազը** հրատարակում է ԱՂԲԻՒՐԻ թղթի վրայ և բաժանորդագրինը Աղբիւր-Տարազի փոխանակ 10 ր. 5 ր., սակայն առանց պրէմիաների և յատուածների։

Տարազը արտացոլում է հայկական և համաշխարհային Գրական-Քաղաքագիտական-Հասարակական-Գեղարուեստական **ՏԱՐԱԶԸ** հրատարակում է շքեղ ու փարթամ։

Տարազը թէ ներքին և թէ արտաքին բովանդակութեամբ հմայիչ է, ուշագրաւ և բազմիմաստ։ **Տարազի** հրատարակութեան հաւատարիմ է մինչև 3 ր. **Տարազին** աշխատակցում են մեր և եւրոպական նշանաւոր արուեստագէտներ, գրականագէտներ, գիտնականներ։ **Տարազը** համաշխարհային մեծ ժամուղի մէջ ճանաչուած է իբրև հռչակաւոր պարբերական հրատարակութիւն։

Տարազը հայկական միակ իլլիւստրասիոնն է և հայութեան մէջ չունի մրցակից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

ԴՊՐՈՑ. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ		LUXE ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ	
Աղբիւրը տարեկան 12 №№	1 ր.	ԱՂԲԻՒՐ տարեկան	3 ր.
Տարազը » »	4 ր.	ՏԱՐԱԶ »	6 ր.
ԱՂԲԻՒՐ ՏԱՐԱԶ ԹԱՏՐՈՆ և ԵՐԱԺ.	5 ր.	ԱՂԲԻՒՐ—ՏԱՐԱԶ	
1 ԱՄԻՍԸ » »	33 կ.	աւելուածներով եւ պրէմիա-	
2 » » »	66 կ.	ներով »	10 ր.
3 » » »	1 ր.	Առաքման (50 ֆր.)	18 ր.

Հասցէ՝ Тифлис, Редакція жур. АГБЮР կամ ТАРАЗ.
Tiflis, Direction «Agbur», «Taraz».

Тифлисъ, Типографія „Гермесъ“ Графская 6